ՊԱՅՔԱՐ ԿԱՍՊՅԱՆ ՆԱՎԹԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ՀԱՄԱՐ

ՄԱՆՎԵԼՅԱՆ Ա. Բ.

ԽՍՀՄ-ի քայքայումից հետո նավթով և գազով հարուստ Կենտրոնական Ասիան, Կասպյան տարածաշրջանը և դրանց դարպասներ համարվող Հարավային Կովկասը դարձան ռուս-ամերիկյան մրցակցության նոր թատերաբեմ: Դեպքերի նման զարգացումը լրիվ կանխատեսելի էր, քանի որ Եվրասիայի վերահսկման գաղափարը Արևմուտքում մշակվել էր դեռ XX դ. սկզբին[1], որպես այսպես կոչված *Heartland*-ի (որը պայմանականորեն կարելի է թարգմանել «սիրտ հող»-ի) տեսություն, և եկել էր ժամանակը այն իրագործելու համար: Մանավանդ Արևմուտքում և հատկապես ԱՄՆ-ում աճել էր քաղաքագետների, տեսաբանների և վերլուծաբանների մի ամբողջ սերունդ, որի համար բրիտանացի հայտնի տեսաբան, աշխարհագրագետ և պատմաբան Հալֆորդ Ջոն Մակինդերի *Heartland*-ի[2] տեսությունը դարձել էր սեղանի գիրք: Դեպի այս տարածաշրջան շարժվելու և այն վերահսկելու գաղափարը մշակում էին Սպիտակ տան արտաքին քաղաքականության վրա հզոր ազդեցություն ունեցող քաղաքագետներ և վերլուծաբաններ, ինչպես Զբիգնև Բժեզինսկին՝ իր հայտնի «Շախմատային մեծ խաղադաշտ»[3] գրքով, ԱՄՆ-ի փոխնախագահ Դիկ Չեյնիի ազգային անվտանգության հարցերով նախկին խորհրդական Լյուիս Լիբին, ԱՄՆ-ի պաշտպանության նախարարի նախկին տեղակալ Պոլ Վոլֆովիցը և այլն: Այսինքն՝ դեպի այս տարածաշրջան շարժվելու համար կար տեսական հիմք, որն ապացուցում և արդարացնում էր այդ քայլի անհրաժեշտությունը ԱՄՆ-ի՝ որպես թիվ 1 գերտերության էլ ավելի հզորացումն ապահովող և նոր գերտերությունների հայտնվելը կանխող հիմնավորում: Տարածաշրջանում գերակայություն հաստատելու համար առաջին հերթին անհրաժեշտ էր սեփական վերահսկողության տակ վերցնել հիմնական հումքային ռեսուրսը՝ նավթը, վերահսկել ոչ միայն դրա արդյունահանումը, այլ, որ ավելի կարևոր էր, արտահանումը:

Միջազգային հարաբերություններում ընդհանրապես և ԱՊՀ տարածաշրջանում մասնավորապես միջպետական կապերի զարգացման քաղաքականության մեջ գնալով է՛լ ավելի են կարևորվում էներգետիկ խնդիրները, որոնք ուղղակի տնտեսականից վաղուց արդեն վերածվել են քաղաքականի: Ուստի կարևորվում են ոչ միայն այն երկրները, որոնք ունեն նավթի կամ գազի որոշակի պաշարներ, այլև նրանք, որոնք վերահսկում են նավթա- և գազամուղները: Տարածաշրջանում

---

[1] **Mackinder H. J.,** *The Geographical Pivot of History (The Geographical Journal, December 1, 2004).*

[2] Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին այս տեսությունը ակտիվորեն կիրառում էին ֆաշիստական Գերմանիայի տեսաբանները, մասնավորապես Քարլ Հաշովերը և Ֆրեդերիկ Ռաթզելը:

[3] **Bzezinski Z.,** *The Grand Chessboard, New York, 1997.*

թափ առնող Ռուսաստան-ԱՄՆ հակամարտության մեջ կարևորվում էր այն, թե ով կվերահսկի ոչ միայն նավթի և գազի արդյունահանումը, այլև դրանց արտահանման ուղիները[4]:

Էներգետիկ հնարավորությունները այն լրացուցիչ գործոնն են, որ որոշում ու թելադրում են քաղաքական զարգացումները թե՛ ԱՊՀ-ում և թե՛ համաշխարհային քաղաքական թատերաբեմում: Վերջին թանկացումները գազի բնագավառում, որին դիմեց Ռուսաստանը, հուշում են, որ ունենալով էներգետիկ այնպիսի հզոր լծակ, ինչպիսին է գազը, պաշտոնական Մոսկվան սկսում է նոր քաղաքական հարաբերություններ կառուցել ԱՊՀ երկրների հետ: Այսինքն՝ ոչ միայն զուտ տնտեսական, այլ նաև քաղաքական գործոնն է առկա, երբ Ռուսաստանը, առաջ մղելով էներգետիկ խնդիրը, փաստորեն ամրացնում է իր դիրքերը տարածաշրջանում: Սակայն եթե «գազային» քաղաքականությունը համեմատաբար նոր երեվույթ է մեր տարածաշրջանում, ապա նավթը վաղուց է օգտագործվում որպես «զենք», և այս բնագավառում նույնիսկ քաղաքական որոշակի փորձ է կուտակվել[5]: Հայաստանը գտնվում է կասպյան և միջինարևելյան նավթով և ընդհանրապես էներգետիկ պաշարներով հարուստ տարածաշրջաններին մոտ, ու այս մոտիկությունը, այսպես թե այնպես, ազդում է հարևան երկրների հետ թե՛ մեր հարաբերությունների ձևավորման և թե՛ մեր նկատմամբ նրանց կողմից տարվող քաղաքականության վրա: Նավթային գործոնը ձևավորում է նաև հարավկովկասյան և կասպյան տարածաշրջաններում ԱՄՆ-ի և ընդհանրապես տարածաշրջանով հետաքրքրվող տերությունների քաղաքականությունը: Այնպես որ այս տարածքներում էներգակիրների արդյունահանման և դրանց արտահանման համար տերությունների միջև ընթացող սուր մրցակցությունը լավագույնս է ցույց տալիս Հարավային Կովկասի և Կասպից ծովի ավազանի երկրների նկատմամբ այդ տերությունների քաղաքականության իրական «արժեքը»: Այսինքն՝ տերությունների միջև այս անհաշտ մրցակցությանը ուշադիր հետևող տարածաշրջանային պետությունների համար կարևոր են էներգետիկ գործոնի ազդեցությունը և հնարավորությունները ճիշտ գնահատելն ու օգտագործելը: Նկատենք, որ էներգետիկ խնդրի թե՛ գերագնահատումը և թե՛ թերագնահատումը հավասարապես վտանգավոր են տարածաշրջանում սեփական անվտանգության համակարգի կառուցման գործում: Եվ քանի որ «էներգետիկ անվտանգություն»[6] հասկացությունը վաղուց արդեն զուտ տնտեսականից վերածվել է քաղաքականի, հետևաբար հարկավոր է բազմակողմանի և մանրակրկիտ ուսումնասիրություններ կատարել այդ անվտանգության մակարդակի բարձրացման հնարավորությունները ճշտելու համար: Մանավանդ որ ԱՊՀ տարածաշրջանում և մասնավորապես Հարավային Կովկասում ընթացող քաղաքական գործընթացների վրա էներգետիկ ազդեցու-

---

[4] *U.S. Policy Toward the Caspian Region: Recommendations for the Bush Administration Dr. Brenda Shaffer is Research Director of the Caspian Studies Program at Harvard University's http://bcsia.ksg.harvard.edu/publication.cfm?program=CORE&ctype=paper&item_id=109.*

[5] *www. Washington ProFile.com "Черное золото" для американских политиков", 20 апреля 2005.*

[6] *www.iags.org/es.html., The Institute for the Analysis of Global* ***Security*** *(IAGS)/* ***Energy Security.***

թյունները նոր որակներ են ձեռք բերում: Եթե 1990-ական թվականների սկզբին Կասպից ծովը, այսպես ասած, միջազգային նավթային շուկայի հետ կապում էին երկու հիմնական նավթամուղ՝ Բաքու-Նովոռոսիյսկը և Թենգիզ-Սամարան, ապա այսօր խողովակաշարերի թիվը հասնում է 7-ի[7], որոնք սկիզբ են առնում Կասպից ծովի ափամերձ շրջաններից և ավարտվում տարբեր երկրների տարածքներում՝ կա՛մ նավահանգիստներում, կա՛մ էլ նավթավերամշակման գործարաններում: Երեք խողովակաշար սկսվում է Բաքվից և ավարտվում Նովոռոսիյսկ՝ Ռուսաստան, Սուփսա՝ Վրաստան, և Ջեյհան՝ Թուրքիա նավահանգստային քաղաքներում: Խողովակաշարերի առատությամբ Ադրբեջանի հետ մրցակցում է Ղազախստանը[8], որի՝ նավթով հարուստ ափամերձ շրջաններից դուրս եկող երեք խողովակաշարերից մեկը գնում է դեպի նույն Նովոռոսիյսկ նավահանգիստ, երկրորդը՝ դեպի Սամարա (այս խողովակաշարով Ղազախստանը միանում է ռուսական խողովակաշարային ցանցին, ինչը հնարավորություն է տալիս այդ երկրի նավթը հասցնել Եվրոպա և Բալթիկ ծովի նավահանգիստները), իսկ երրորդ նավթամուղը Կասպից ծովի ղազախստանյան ափերը կապում է չինական Ալաշենկու քաղաքի հետ[9] և նախատեսված է չինական նավթային շուկայի համար: Եվ, վերջապես, յոթերորդը իրանական Նիկա-Ռեյ խողովակաշարն է, որը շահագործման հանձնվեց 2005 թ.: Այս զարգացումներից և խողովակաշարային պայքարից իսկ կարելի է նկատել, որ ԱՄՆ-ի կողմից ռազմավարական համարված Բաքու-Ջեյհանը, ի տարբերություն անցած դարի 90-ականի, ներկայումս լուրջ մրցակիցներ ունի, և խնդիրը ոչ այնքան բուն նավթն է, որքան կառուցվող նավթամուղների միջոցով ազդեցության պահպանումը և ուժեղացումը: Հետևաբար, բացառված չէ նոր նավթամուղների կառուցումը, որտեղ գերակա է քաղաքական, այլ ոչ թե տնտեսական գործոնը:

Բաքու-Ջեյհան խողովակաշարին տնտեսական գրավչություն տալու համար Վաշինգտոնը կարևորում է Ղազախստանի միացումը այս ծրագրին[10]: 2005 թ. մարտին Ալիև-կրտսերը Աստանա կատարած իր այցի ժամանակ արժևորեց կառուցվող խողովակաշարով ղազախական նավթի արտահանման հարցի քննարկումը: Ընդհանուր առմամբ հավանություն տալով այդ ծրագրին՝ Նախագահ Ն. Նազարբաևը այն դիտում է որպես ընդամենը այլընտրանքային և ոչ հիմնական ուղի՝ սեփական նավթը արտահանելու համար: Ղազախստանի պետական նավթային ընկերության՝ «Կազմունայգազի» նախագահը հայտարարեց, որ պատրաստ են տարեկան 6-8 մլն տոննա նավթ արտահանել Բաքու–Ջեյհանով, և եթե սրան էլ գումարենք Ադրբեջանի արտահանման ողջ հզորությունը, որը տարեկան կազմում է մոտ 15 մլն տոննա, ապա լավագույն դեպքում նավթամուղը կաշխատի իր

---

[7] **Бахшиян К.**, *Трубопровод как новый политический фактор в регионе Южного Кавказа (Голос Армении, 2.IX.2004).*

[8] www.Neftegaz.ru**, Захарова Т.**, *Нефтепровод, рожденный политикой.*

[9] **Гавричев С.**, *Каспийская поднебесная: Китай становится в регионе перспективным инвестором и партнером,* www.Rus Energy.

[10] www.*Росбалт.ru, 03/10/2005, Главная лента 09:39 Назарбаев: Через Баку-Тбилиси-Джейхан пойдет казахстанская нефть.*

հզորության 40-50%-ով: Սա նշանակում է, որ տեսանելի ապագայում խողովակաշարը չի կարող փակել շինարարության համար ծախսված գումարները: Այս փաստը հասկանալով՝ խողովակաշարի տերերը փորձեցին նախագծի մեջ ընդգրկել Ռուսաստանին, սակայն և՛ ամերիկյան բանագնացների, և՛ նույնիսկ Ալիևկրտսերի ու Սահակաշվիլու մոսկովյան այցերը մեկ անգամ ևս փաստեցին, որ Ռուսաստանը ընդգծված սառնությամբ է վերաբերվում ծրագրին: Մոսկվայում արձագանքի չարժանացավ նաև Սահակաշվիլու առաջարկը՝ Նովոռոսիյսկ քաղաքից կառուցել լրացուցիչ նավթամուղ, որը կմիանա ԲաքուՋեյհանին[11]:

Նավթամուղի արդյունավետությանը անսպասելիորեն սկսել է սպառնալ Չինաստանը, որի՝ արագ տեմպերով աճող շուկան էներգակիրների նորանոր պաշարների կարիք ունի: Արդեն ավարտվել են Ղազախստան- Չինաստան նավթամուղի կառուցման աշխատանքները: 3000 կմ երկարությամբ նավթամուղը կասպյան ավազանը կապելու է Չինաստանին: Նշենք, որ չինական շուկան անցած տարի սպառել է մոտ 127 մլն տոննա նավթ. այս ցուցանիշով վերջինս զիջում է միայն ԱՄՆ-ին[12]: Եվ այսպես, դեպի Չինաստան կառուցվող նավթամուղը լուրջ մրցակից է Բաքու-Ջեյհանին, և 2006 թ. ղազախաչինական նավթամուղի շահագործումից հետո ղազախական նավթը կարող է ամբողջովին փոխել իր ուղղությունը՝ հոսելով դեպի Չինաստան: Այս պայմաններում, առանց ղազախական նավթի, Բաքու-Ջեյհանը կարող է դառնալ թանկարժեք մետաղե ջարդոն:

Նավթամուղի արդյունավետ շահագործմանը սկսել է սպառնալ նաև իրանական Նիկա-Ռեյ նավթամուղը, որը Կասպից ծովի ափին գտնվող իրանական Նիկա նավահանգիստը կապում է Թեհրանին մերձակա նավթավերամշակման գործարանին: Ներկայումս խողովակաշարի թողարկման հզորությունը կազմում է 8.5 մլն տոննա, սակայն նախագծային հզորությունը 25 մլն տոննա է: Այս ծրագրի համաձայն՝ Իրանը կասպյան ավազանի երկրներից է վերցնում նավթ, որը նրան անհրաժեշտ է երկրի հյուսիսային տարածքների կարիքների համար, դրա փոխարեն վերջիններիս նավթ է տրամադրում Պարսից ծոցի իր նավթահանքերից: Այս ծրագրով Իրանը ազատվում է երկրի հարավից նավթը հյուսիս տանելու ծախսերից, իսկ ավազանի երկրները՝ նավթը միջազգային շուկա հանելու թանկ և դժվարին խնդիրներից: Այս քայլով Իրանը ավազանի երկրների համար բացում է արագ տեմպերով աճող ասիական շուկայի դռները: Ծրագրի նկատմամբ արդեն հետաքրքրություն են ցուցաբերել Ղազախստանը, ռուսական ու թուրքմենական կողմերը:

Բաքու-Ջեյհանին որոշակիորեն սպառնում է նաև Քիրքուկ (Իրաք)-Ջեյհան նավթամուղը, որի վերականգնման աշխատանքները ավարտվել են, ու դրանով

---

[11] *www.ng.ru, Независимая газета, Российские чиновники и бизнесмены не спешат откликаться на призывы президента Грузии Михаила Саакашвили о дружбе.*

[12] *Statistical Review of World Energy* ***http://www.bp.com/subsection.do?categoryId=-9003064&contentId=7005874****.*

իրաքյան բարձրորակ և էժան նավթը կարող է հոսել դեպի միջերկրածովյան նավահանգիստ: Այս պայմաններում հարց է առաջանում, թե մասնավոր գնորդը ո՞ր նավթը կնախընտրի՝ թանկ կասպյա՞նը, թե՞ էժան ու որակյալ արաբականը[13]:

Հաջորդ սպառնալիքը Ռուսաստանի հովանավորությամբ կառուցվող՝ Բոսֆոր և Դարդանել նեղուցները շրջանցող Բուրգաս (Բուլղարիա)- Ալեքսանդրապոլիս (Հունաստան) նավթամուղն է, որի շինարարության վերաբերյալ համաձայնագիրը Աթենքում կնքվեց 2005 թ. մարտին Ռուսաստանի նախագահ Պուտինի այցի ժամանակ, իսկ նույն թվականի մայիսին արդեն Մոսկվայում հունական և բուլղարական կողմերի հետ համատեղ ստեղծվեց նավթային կոնսորցիում, որը կզբաղվի նավթամուղի շինարարությամբ[14]: Սա նշանակում է, որ «ռուսական» նավթը կկարողանա շրջանցել «թուրքական» արգելքը, այսինքն՝ Բոսֆոր և Դարդանել նեղուցները, և Էգեյան ծովով կհայտնվի «միջազգային շուկայում»:

Ի՞նչն է սպառնում նավթամուղի արդյունավետ շահագործմանը: Ինչքա՞ն նավթ կա Կասպից ծովի ավազանում և մասնավորապես Ադրբեջանի ափամերձ շրջանում: 1990-ական թվականներին, երբ կասպյան ավազանի երկրները անկախություն ստացան, սկսվեցին լայնածավալ *PR* ակցիաներ, որոնց նպատակն էր համոզել աշխարհին և, առաջին հերթին, նավթ սպառող երկրներին, որ սա նոր Պարսից ծոց է: Այն ժամանակ միջազգային տարբեր լրատվամիջոցներ նշում էին, որ տարածաշրջանը տիրապետում է համաշխարհային նավթի պաշարների 27%-ին, ավելի ուշ այս թիվը իջեցվեց մինչև 7%-ի: Սակայն անգամ այս տվյալները հերքվում էին մասնագետների կողմից: Նկատենք, որ Կասպից ծովի ափամերձ շրջանների երկրաբանական քարտեզները գտնվում էին Մոսկվայում, և նույնիսկ Կասպից ծովի ավազանի երկրների իշխանությունները չունեին ածխաջրածնի իրենց իրական պաշարների լիակատար պատկերը: Սակայն այս փաստը վերջիններիս չէր խանգարում գոնե թղթի վրա մրցակցել Պարսից ծոցի երկրների հետ: Միայն տարիներ անց՝ երկարատև ուսումնասիրություններից և մեծ հիասթափություններից հետո, պարզ դարձավ, որ տարածաշրջանը չի տիրապետում նավթի քիչ թե շատ լուրջ պաշարների, ինչը կարող էր կարևորել այդ երկրների դերը համաշխարհային նավթային շուկայում, հետևաբար նաև համաշխարհային քաղաքական քարտեզում: Ըստ Բրիթիշ Փեթրոլեում ընկերության "*Statistical Review of World Energy*" հանդեսի՝ կասպյան ողջ տարածաշրջանի նավթի պաշարները կազմում են համաշխարհային նավթի մոտ 3.2%-ը[15]: Այս պաշարների 0.6%-ը կամ մոտ 7 մլրդ բարելը կենտրոնացած է Ադրբեջանի, իսկ մոտ 0.8%-ը (սա ամենամեծ փայաբաժինն է տարածաշրջանի երկրների մեջ)՝ Ղազախստանի ափամերձ շրջաններում: Համեմատության համար ասենք, որ փոքրիկ Քուվեյթը տիրապե-

---

[13] **Вяземская О.,** *МИЭП МГИМО. Проблемы и перспективы взаимоотношений ОПЕК и России. http://neft.tatcenter.ru/analytics/?page=5.*

[14] **Боков М.,** *"Роснефть" не скупится. Госкомпания готова проинвестировать трубопровод Бургас-Александруполис, www.Rus Energy.com.*

[15] *Statistical Review of World Energy (http://www.bp.com/subsection.do?categoryId=9003-064&contentId=7005874).*

տում է համաշխարհային նավթի մոտ 8.4%-ին[16], ավելի շատ, քան Կասպից ծովի ափամերձ շրջաններից նավթ արդյունահանող երկրները միասին վերցրած: Այսինքն, նավթային լուրջ պաշարների ու առավել ևս համաշխարհային նավթային շուկայում այդ պաշարների միջոցով քաղաքական ազդեցության ուժեղացման մասին խոսելը լուրջ չէ: Ներկայումս ողջ տարածաշրջանը նավթի արտահանման ծավալներով ապահովում է համաշխարհային նավթի սպառման ընդամենը 0.8%-ը, և միայն 2010 թ. այն կարող է հասնել1%-ի: Նորից համեմատելով *OPEC*-ի անդամ երկրների հետ՝ նկատենք, որ վերջիններս ապահովում են համաշխարհային սպառման շուկայի 35-ից 40%-ը[17]: Տարածաշրջանը թիվ մեկ գերտերությանը՝ ԱՄՆ-ին, հետաքրքրքրում է ոչ այնքան նավթի պաշարների, որքան այդ նավթի միջոցով սեփական ազդեցության ուժեղացման տեսակետից: Նավթը ընդամենը միջոց է, որը Վաշինգտոնին թույլ է տալիս վերահսկողություն սահմանել թե՛ Հարավային Կովկասի և թե՛ Կասպից ծովի ու Կենտրոնական Ասիայի երկրների նկատմամբ: Հենց այս տեսանկյունից էլ պետք է դիտել նաև Բաքու-Ջեյհան նավթամուղի կառուցման ծրագիրը: Այսինքն՝ Վաշինգտոնին այն առաջին հերթին հարկավոր է տարածաշրջանի նավթային հոսքերը վերահսկելու և դրա միջոցով կախվածությունը ուժեղացնելու իրենից: Բաքու-Ջեյհանը ոչ միայն թույլ է տալիս դուրս գալ Կասպից ծով, այլ, առաջին հերթին, ըստ ամերիկյան «ռազմավարների»[18], հնարավորություն է ընձեռում այդ նավթամուղին կապել Ադրբեջանի, Ղազախստանի, հետագայում նաև Թուրքմենստանի ու Ուզբեկստանի նավթային տնտեսությունները: Իսկ քանի որ այս երկրները ոչինչ չունեն աշխարհին առաջարկելու, բացի նավթից ու գազից, ԱՄՆ-ը փորձում է անել հնարավորը այդ պետությունների տնտեսության հիմնական ու թերևս միակ ճյուղը՝ նավթարդյունաբերությունը, դնել իր լիակատար վերահսկողության տակ՝ գլոբալ մասշտաբով վերահսկողություն սահմանել ոչ միայն նավթի արդյունահանման, այլ նաև տեղափոխման վրա: Եվ այս առումով, Բաքու-Ջեյհանը Վաշինգտոնի համար անփոխարինելի է և ռազմավարական նշանակություն ունի: Սակայն այս ծրագրերը հնարավոր կլինի իրականացնել այն դեպքում, եթե ոչ միայն ադրբեջանական, այլ նաև կասպյան ավազանի ու Կենտրոնական Ասիայի մյուս երկրների նավթը հոսի այս խողովակաշարով: Մինչ օրս միայն Ղազախստանն է խոստացել իր նավթի որոշակի քանակը ուղղել դեպի Բաքու[19], սակայն այս խոստումը առայժմ ամրագրված չէ միջպետական վերջնական պայմանագրով. սրա մասին կան միայն կնքված նախնական պայմանավորվածություններ և հուշագրեր: Պետք է հաշվի առնել նաև այն, որ Ղազախստանը նավթի առաքման մասին երկարատև պայմանագրեր ունի Ռուսաստանի և Չինաստանի հետ: Հետևաբար, նա լուրջ խնդիրներ կունենա դեպի Բաքու-Ջեյհան

---

[16] *Նույն տեղում:*

[17] http://www.opec.org/home/PowerPoint/Downstream%20Constraints/OPECDownstreamexplans.htm.

[18] *Dr. Brenda Shaffer is Research Director of the Caspian Studies Program at Harvard University. U.S. Policy Toward the Caspian Region: Recommendations for the Bush Administration: July 2001. 1.*

[19] **Гавричев С.**, www.RusEnergy.com. *Золотая четверть. Казахстан определился, с кем и какие части Каспия будет осваивать. Дата публикации: 7 апреля 2006 г.*

նավթի առաքման հարցում: Բացի այդ, Ղազախստանի նավթի արտահանման հզորությունը տարեկան կազմում է ընդամենը 45 մլն տոննա, և քանի դեռ Կաշղանյան նավթահորից նավթ չի սկսել արդյունահանվել, անիմաստ է սպասել ղազախական նավթի լուրջ պաշարների հայտնվելուն Բաքու-Ջեյհան նավթամուղում:

Եվ այսպես, թե՛ Հարավային Կովկասում և թե՛ կասպյան ավազանի երկրներում միջպետական հարաբերություններում կարևորվում է նավթային գործոնը: Ե՛վ նավթի արդյունահանման, և՛ վերջինիս արտահանման համար ընթացող պայքարը, որին, բացի տարածաշրջանի երկրներից, ակտիվորեն մասնակցում են ԱՄՆ-ը, Եվրամիությունը, Չինաստանը, «նպաստում» է այդ երկրների միջև հարաբերությունների ձևավորմանը: Նավթային պաշարները և Կասպից ծովի կարգավիճակին առնչվող պայքարը լուրջ տարաձայնություններ է առաջացնում Ադրբեջանի, Ղազախստանի, Թուրքմենստանի և Իրանի միջև[20]: Վերջիններս չեն կարողանում ընդհանուր հայտարարի գալ ոչ միայն ծովի կարգավիճակի հարցում, այլ նաև այս կամ այն նավթահանքի պատկանելության խնդրում: Ադրբեջանը, Իրանը և Թուրքմենստանը մինչ օրս վիճարկում են մի շարք հանքավայրերի պատկանելության հարցը[21]: Կասպից ծովը մինչ օրս չունի միջազգայնորեն ճանաչված կարգավիճակ. փաստացի գործում է ԽՍՀՄ-ի և Իրանի միջև կարգավիճակի մասին 1940 թ. կնքված պայմանագիրը: Այս փաստաթղթի բացակայությունն էլ նպաստում է հանքավայրերի պատկանելության վերաբերյալ վեճի ուժեղացմանը: Ղազախստանի և Ադրբեջանի հետ Ռուսաստանի կնքած առանձին պայմանագրերը ոչ թե նպաստում, այլ, ընդհակառակը, սրում են հարաբերությունները Կասպից ծովի ավազանում[22]: Սա էլ, իր հերթին, հանգում է ավազանի երկրների կողմից սեփական ռազմական նավատորմների ուժեղացման քաղաքականությանը, ինչը խթանում է Կասպից ծովի ռազմականացումը և ռազմական նոր մրցավազքը[23]: Նկատենք, որ այս վերջին գործընթացը տեղի է ունենում ԱՄՆ-ի ակտիվ աջակցության պայմաններում, որը զինում է թե՛ Ադրբեջանի և թե՛ Ղազախստանի նավատորմները: Հասկանալի է, որ այս գործընթացից փորձում են հետ չմնալ Իրանը և Թուրքմենստանը: Սակայն Կասպից ծովում ռազմածովային գերիշխանության առումով Ռուսաստանը առայժմ մրցակիցներ չունի:

Հարավային Կովկասի պետությունները Արևմուտքին և հատկապես ԱՄՆ-ին հետաքրքրում են որպես իրենց համար ռազմավարական նշանակություն ունեցող տարածաշրջան՝ Կենտրոնական Ասիա դուրս գալու կարևորագույն ճանապարհ: Այս առումով, Արևմուտքի համար կարևոր է Հարավային Կովկասում կայունության պահպանման խնդիրը: Հետևա-

---

[20] **Сер С.,** *Как обойти Иран? Обратитесь к Азербайджану "The Jerusalem Post", Израиль, 10 июня 2005 г.*

[21] **Заславский И.,** *www.REGNUM.ru , Баку-Тбилиси-Джейхан: Трудности (трубо) перевода.*

[22] *Бутаев А. М., Каспий: зачем он Западу? http://www.caspiy.net/.*

[23] **Richter P.,** *The Struggle for Caspian Oil, the Crisis in Russia and the Breakup of the Commonwealth of Independent States. 1 July, 1999, http://www.wsws.org/articles/1999/jul1999/rus-j01.shtml.*

բար, ցանկացած կտրուկ գործողություն, ինչը կարող է սպառնալ տարածաշրջանի կայունությանը, անընդունելի է Արևմուտքի և հատկապես ԱՄՆ-ի համար: Վերջիններս շահագրգռված են տարածաշրջանում ցանկացած գնով կայունության պահպանման համար: Այս իրավիճակն էլ, իր հերթին, ազդում է տարածաշրջանի երկրների միջև հարաբերությունների հաստատման գործընթացի վրա: Վերջիններս չեն կարող իրենց հարաբերությունները կարգավորել՝ առանց հաշվի առնելու նավթային գործոնը և դրա շուրջ գերտերությունների միջև ընթացող պայքարը: Ստեղծվել է մի իրավիճակ, երբ հարևան երկրները միմյանց հետ հարաբերությունները կառուցում են՝ ստիպված լինելով հաշվի առնել տերությունների շահերը: Սա էլ, իր հերթին, ազդում է թե՛ տարածաշրջանային ինտեգրման գործընթացների և թե՛ այստեղ առկա հակասությունների ու հակամարտությունների վերաբերյալ ընթացող բանակցությունների վրա:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ էներգետիկ խնդիրները և դրանց շուրջ տերությունների ուժեղացող մրցակցությունը բացասաբար են ազդում թե՛ Հարավային Կովկասում և թե՛ Կասպից ծովի ավազանում ու Կենտրոնական Ասիայում պետությունների միջև առկա խնդիրների լուծման և բնականոն հարաբերությունների հաստատման վրա:

БОРЬБА ЗА ПРАВО КОНТРОЛЯ НАД ЭКСПОРТОМ КАСПИЙСКОЙ НЕФТИ

МАНВЕЛЯН А. Б.

Резюме

Контроль каспийских нефтяных потоков обусловлен стремлением установить политическое господство в регионе. Именно наличием политического фактора была продиктована необходимость строительства нефтепровода “Баку-Тбилиси-Джейхан” (БТД), посредством которого Соединенные Штаты хотят осуществлять контроль над каспийскими государствами: Азербайджаном, Казахстаном, Туркменистаном. США планируют воздействовать на прикаспийские нефтяные государства с тем, чтобы принудить их к транспортировке нефтяных ресурсов с помощью трубопровода “БТД”, тем самым контролируя нефтяные потоки. В развернувшейся борьбе вокруг каспийской нефти кроме России и США активно участвуют Китай и Иран. Вокруг Каспийского моря на данном этапе действуют и строятся еще семь нефтепроводов, которые могут серьезно осложнить функционирование “БТД”, что противоречит интересам США в регионе. Данный регион, не обладая серьезными нефтяными ресурсами (всего 3.2 % мирового запаса), исходя из политических соображений, в первую очередь интересует США. Укрепив свои позиции на Южном Кавказе и в Каспийском регионе, США в дальнейшем получат возможность осуществлять экономический и политический контроль в государствах Центральной и Южной Азии.